ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հունվարի 2020 թվական N 09-Ա

ՈՒՍՄԱՆ ՎԱՐԶԻ ՄԱՍԻՆ

Մայակովսկի համայնքապետարան՝ դիմել համայնքի բնակիչ, բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորող ուսանող՝ Մովսես Խորենացու անվան համալսարանի 2-ին կուրսի ուսանող Գայանե Խուդաշյանը, խնդրելով կատարել ուսման վարձի որոշակի դրամական փոխանցում :

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35 –րդ հոդվածի 1-ին մասի 24- րդ կետի և համայնքի ավագանու 2019 թվականի փետրվարի 18-ի թիվ 08–Ա որոշման պահանջները .

որոշում եմ՝

1. Կատարել փոխանցում Գայանե Խուդաշյանի անունով 50 000 / հիսուն հազար / դրամ ուսման վարձ<<Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> , 220003333808000 հաշվի համարին:

2. Հանձնարարել հաշվապահ Աստղիկ Հարությունյանին կատարել փոխանցում :

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2020թ.հունվարի 23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» հունվարի 2020 թվական N 10-Ա

ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 41 հոդվածի 2 կետի 1 ենթակետի, << Նորմատիվ իրավական ակտերի մասին >> օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով, ***որոշում եմ՝***

1. Մայակովսկի համայնքի ղեկավարի 2012 թվականի ապրիլի 27-ի « Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը հաստատելու մասին» N 44-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Գլուխ 2-ի 2.1 կետը խմբագրել հետևյալ կերպ.

« համայնքի բնակչությունը-2183 մարդ, անասնագլխաքանակը- 864,այդ թվում ՝ խոշոր եղջերավոր անասուններ-386» ,

2) հավելված 1-ի 1-ին կետը ՝ << Բնակչությունը - 2183 մարդ , մինչև 1 տարեկան՝ 22, 1-15 տարեկան՝ -442, 16-18 տարեկաններ՝ -43 ,16-ից բարձր՝ 1676, աշխատունակ տարիքի՝1614, »

5-րդ կետը՝« պատսպարվողների քանակը-2183»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի

2020թ.հունվարի 29

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» հունվարի 2020 թվական N 11-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 11-րդ,82-րդ և 84-րդ հոդվածների , հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 6-ի N 24-Ն որոշումը, *որոշում եմ.*

1.Մայակովսկի համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագծի, 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի նախագծի, համայնքի ղեկավարի նախորդ տարվա կատարված աշխատանքների և քաղաքաշինական փոփոխությունների վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ:

2. Հաստատել Մայակովսկի համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագծի , 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի նախագծի, համայնքի ղեկավարի նախորդ տարվա կատարված աշխատանքների և քաղաքաշինական փոփոխությունների վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը՝ համաձայն հավելվածի:

3. Հանրային քննարկումների ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել աշխատակազմի առաջատար մասնագետ, խորհրդակցական մարմնի անդամ Աստղիկ Հարությունյանին :

4. Մայակովսկի համայնքապետարանի առաջատար մասնագետ Աստղիկ Հարությունյանին ՝

1) համայնքի տեղեկատվական զարգացման ծրագրում տեղադրել Մայակովսկի համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագծի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի նախագծի, համայնքի ղեկավարի նախորդ տարվա կատարված աշխատանքների և քաղաքաշինական փոփոխությունների վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար.

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Աստղիկ Հարությունյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Վեներա Փայտյանը :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2020թ.հունվարի 29

Հավելված

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Սոյնով Մայակովսկի համայնքապետարանը հրավիրում է բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցելու 2020թվականի փետրվարի 8-ից մինչև 21-ը ներառյալ կազմակերպվող Մայակովսկի համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագծի, 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի նախագծի, համայնքի ղեկավարի նախորդ տարվա կատարված աշխատանքների և քաղաքաշինական փոփոխությունների վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումներին:

Շահագրգիռ անձինք համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարակված Մայակովսկի համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագծի , 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի նախագծի, համայնքի ղեկավարի նախորդ տարվա կատարված աշխատանքների և քաղաքաշինական փոփոխությունների վերաբերյալ կարող են մինչև 2020 թվականի փետրվարի 21-ը ներառյալ ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտողությունները, որոնք կարող են թողնվել համացանցային կայքի «Հաշվետվություններ» մասում , կամ ուղարկվել համապատասխան էլեկտրոնային հասցեով (mayakovski.kotayq@mta.gov.am), ինչպես նաև կարող են գրավոր ներկայացնել Մայակովսկի համայնքապետարան:

Հանրային քննարկումների ընթացքում 2020 թվականի փետրվարի 22-ին ժամը 16:00-ին Մայակովսկի 1-ին փողոց, թիվ 8/1 հասցեում գտնվող Մայակովսկի համայնքապետարանի վարչական շենքի առաջին հարկում տեղի կունենան հանրային բաց լսումներ:

Լսումներին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև 2020 թվականի փետրվարի 21-ը ներառյալ ներկայացնել դիմում/ դիմումի ձևը կստանաք տեղում/:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել

060 86 50 13 *հեռախոսահամարով :*